

Հոս կու տամ ինչ որ կարելի է ինծի համար հաւաքել զոյներու պատրաստութեան համար: Խիստ հաւանական է որ ձեռագրաց մէջ ալ շատ մը մասնր մուկնր տեղեկութիւններ ըլլան այս մասին:

ԴԵՂԻՆ.

«Դեղին ներկը կը ստացուի քանի մը ազրիւրներէ: Կան որ կը պատրաստուին արեւմտեան Ասիոյ զանազան տունկերէն եւ թութերէն: Ուրիշներ սուփաք կոչուած տունկին տերեւներէն, որ բնիկ է աշխարհիս ամէն մասին: Նարնջագոյն երանդ մը կը ստացուի զուրմերիքէն (turmeric Հնդկաստանի տունկ մը): Գուրգուժա կոչուած տունկին կարճ արմատներէն: Անյիշատակ ժամանակներէ ի վեր գեղեցիկ դեղին մը կը ստացուի սաֆրանէն»⁽³⁵⁾: Իսկն Հաուզալ արար պատմիչը ժ դարուն կը գրէ Տէրպէնտի մասին (որ Հայաստան կը նկատէ): «Ասկէ կը զրկեն կառուեղէն Իրանի եւ Ազրբայճանի ամէն կողմը: Նաեւ հոս կը հիւսեն գորգեր կամ ծածկոցներ եւ կը մշակեն սաֆրան»⁽³⁶⁾: Իսկ ժէ դարուն ժ. Պ. Թալէրնիէ Թոքաթի մասին կը գրէ. «Ամբողջ Ասիոյ մէջ միակ վայրն է ուր առատ սաֆրան կ'աճի, որ ամենաբարձր ապրանքն է Հնդկաստան տանելու, ուր բառնուր, տարուան ընթացքին, կ'արժէ 13 կամ 14 Փրանք (ոսկեդրամ), եթէ նոյնիսկ սաֆրանը պարունակող մոմը սաֆրանին չափ կ'ընէ»⁽³⁷⁾: Այդ առեւնները սաֆրանը մոմէ ամաններու մէջ լեցուած՝ Թոքաթէն մինչեւ Հընդկաստան կը տանէին բնիկ կամ հայ վաճառականներ: Սաֆրանը զօրաւոր ներկ մըն է որ իր ծանրութեան 7,000 անգամ աւելի կ'ոռող ջուրը գեղին կը ներկէ:

Մշոյ մէջ սակայն դեղին կը ներկեն ալաժաիի կոչուած ծառի պտուղով⁽³⁸⁾: Իսկ Բուլանըղի մէջ «Դեղին գոյն ունենալու համար, մանածը չափ ջրով կ'եռացնեն եւ չորցնելուց յետոյ իշկաքուի խոտով միասին լաւ կը խաշեն եւ կը ստանան դեղին ու բաց դեղին գոյնի մանածներ»⁽³⁹⁾: Շատախի մէջ «դեղնագոյն ներկելիս մի նուրի կանձի համար 20 դրամ (կամ երկու ձուի քաշ) չիպ լցնում են եռացող ջրի մէջ, կանձերը ձգում մէջը եւ թողնում 10-15 րոպէ եռալու, ապա հանում են, սառ ջրով լուանում եւ ձգում մի ուրիշ եռացող ջրի մէջ, աւելցնելով իւրաքանչիւր նուրի կանձի համար 50 դրամ դեղնակ կոչուած չորացած բոյսը: Սա առաւելապէս բուսնում է Սպակերաի եւ Խէզանի կողմերում եւ չորացած բերում այստեղ: Սրա նուրին

(35) W. A. Hawley. — Oriental Rugs, N. Y. 1927, p. 38-9.

(36) The Oriental Geography. — London, 1800, p. 159.

(37) The Persian Travels, London, 1684, Vol. I, p. 5.

(38) Նկար. Ուղ. Միւրախորեան, 1884, հտ. Ա, էջ 35:

(39) Ազգ. Հանդ. 1899, թիւ 1, էջ 69: